10990

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան
«04» 10 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 203 - 24

Նախաձեռնող՝ **«Դ Վենչուրս» ՓԲԸ**
ք. Երևան, Բաղրամյան 6

Գործունեությունը՝ **Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց հ.57, հ.58 և հ.59 հողամասերում ցանկապատի կառուցում**
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 203 - 24

«04» հոկտեմբերի 2024թ.

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց հ.57, հ.58 և հ.59 հողամասերում ցանկապատի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Դ Վենչուրս» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Շողակաթ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է բարեկարգել Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող ափամերձ գոտու հատվածը՝ ներկայացվող տարածքը շրջափակելով ցանկապատով և տեղադրելով մետաղական դարպասներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 8 մասի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է բարեկարգել Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող ափամերձ գոտու հատվածը՝ ներկայացվող տարածքը շրջափակելով ցանկապատով և տեղադրելով մետաղական դարպասներ: Հողամասեր N 57, 58 և 59-ում կառուցապատում իրականացնելու իրավունք է տրվել «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից մինչև 2032թ.-ի նոյեմբերի 16-ը: Ներկայացվող տարածքը վարձակալության հիմունքով հանձնված է «Դ ՎԵՆՉՈՒՐՍ» ՓԲ ընկերությանը: Նշված տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 8,254 հա, որը բաժանված է երեք մասի: Ներկայումս, նշված տարածքում չի իրականացվում որևէ գործունեություն: Տարածքը ամայի է և ներկայացված գործունեության արդյուքնում չեն կառուցվելու այլ շինություններ: Ներկայացվող գործունեության արդյունքում ընդհանուր տարածքի վիճակը կլինի ավելի բարեկարգ և ապագայում հնարավորություն կլինի կազմակերպել բացօդյա միջոցառումներ: Համաձայն նախագծի՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրային հիմունքով տրամադրված տարածքում նախատեսվում է բարեկարգել՝ շրջափակել ցանկապատով և տեղադրել մետաղական դարպասներ: Նշված ցանկապատը և դարպասները բաղկացած են

լինելու մետաղական ցանցից և մետաղական խողովակներից: Ներկայումս, նշված տարածքը հիմնականում ամայի է, ափամերձ հատվածում կա որոշակի ծառաթփային բուսականություն (հիմնականում՝ եղևնիներ, չիչխանի թփեր) և ցանկապատի ու դարպասների տեղադրման ընթացքում դրանք չեն վնասվելու:

«Դ ՎԵՆՉՈՒՐՍ» ՓԲ ընկերության կողմից նախաձեռնվող ցանկապատի և դարպասների կառուցման և տեղադրման համար հայցվող տարածքը տեղակայված է Սևանա Աճի ափին, «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին պատկանող Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում և զբաղեցնում է ընդհանուր առմամբ 8.254հա մակերես, բաղկացած է երեք հողակտորից: Նշված տարածքների կադաստրային կոդերն են՝ 1. 05-074-1091-0060, 2. 05-074-1091-0058, 3. 05-074-1091-0076: Տարածքը հարակից է Սևան-Շողակաթ-Վարդենիս Մ14 ավտոճանապարհին: Դեպի տարածք տանող ճանապարհի գլխավոր մուտքն ապահովված է Սևան-Վարդենիս մայրուղային ճանապարհից: Կառուցապատվող հողամասը գոյություն ունեցող ասֆալտապատ ճանապարհից /որը 1905.00 նիշից վերև է/ գտնվում է մոտ 4 կմ հեռավորության վրա (ուղիղ գծով): Կառուցապատման տարածքի ամենաոտ հեռավորությունը Սևանա լճից կազմում է 10 մ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի ափամերձ գոտում, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում, Ճամբարակ խոշորացված համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական սահմանում: Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°27'54.89"C, 45°17'57.24"B: Նշված տարածքի հեռավորությունը ամենամոտ բնակավայրերից կազմում է՝ Շողակաթ (Շորժա) բնակավայր մոտ 4.5 կմ, Արտանիշ բնակավայր մոտ 6 կմ:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

	X	Y
1	8525643.6875	4481182.5621
2	8525632.5516	4481256.4791
3	8525614.9179	4481257.6665
4	8525572.9706	4481260.5417
5	8525506.8936	4481265.1415
6	8525471.2143	4481267.4450
7	8525458.4705	4481269.2751
8	8525452.7284	4481272.2784
9	8525436.2819	4481285.6003
10	8525437.3805	4481282.6003
11	8525447.5967	4481266.9708
12	8525438.2969	4481266.2712
13	8525432.7640	4481265.6928
14	8525450.8706	4481108.9844
15	8525451.9274	4481099.8375
16	8525453.0286	4481090.3075
17	8525462.1476	4481011.3847
18	8525670.5657	4480997.1972
19	8525660.8460	4481067.0446
20	8525657.8851	4481088.3219

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա: Մթնոլորտային արտանետումներ կառաջանան գործունեության իրականացման շինարարական փուլում: Արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութերը, մասնավորապես՝ փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումները: Փոշու շատ կարճաժամկետ և շատ քիչ քանակով արտանետումներ կառաջանան շինարարության աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա և հարակից տարածքներում հանգստացողների վրա: Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի: Կարևոր է նաև հաշվի առնել, որ հողային աշխատանքներ գրեթե չեն իրականացվելու, ուստի ազդեցությունները լինելու են կարճաժամկետ և ոչ էական: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները: Շինարարության ժամանակ կպահպանվեն անվտանգության, տեխնիկայի և հակահրդեհային կանոնները և նորմերը:

Պարճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) պահանջներով: Հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Գեղարքունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում: Օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման և փորձաքննության փուլերում Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համանքի Շողակաթ բնակավայրում Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց h.57, h.58 և h.59 հողամասերում ցանկապատի կառուցման աշխատանքների վերաբերյալ անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: ՇՄԱԳ-ի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր, որոնք վերաբերել են՝ ցանկապատման համար նախատեսվող տարածքի տեղադիրքի և կոորդինատների անճշտություններին, ցանկապատման աշխատանքների տեսակին /ՇՄԱԳ-ում նախատեսված է եղել մետաղական ցանկապատ և դարպաս/ և ցանկապատի կառուցման արդյունքում բնակիչների տեղաշարժի հետ կապված խնդիրների առաջացմանը: Նշված դիտողությունները փորձաքննության գործընթացում ներկայացվել են ընկերությանը՝ ՇՄԱԳ-ի լրամշակումներում հաշվի առնելու նպատակով, սակայն մինչև գործընթացի ավարտ լրամշակված տարբերակը ընկերության կողմից չի ներկայացվել լիազոր մարմնին:

Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

1. Համաձայն տարածքի վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացված ծայրակետային կոորդինատային տվյալների՝ գործունեության համար նախատեսված տարածքի մոտ 30% հատվածը ջրածածկ է, գտնվում է Սևանա լճի մեջ:

2. Հաշվի առնելով, որ գործունեության ենթակա տարածքը նախկինում օգտագործվել է որպես լողափ, հետևաբար համաձայն Կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման 11-րդ կետի 8)-րդ ենթակետի՝ արգելվում է լողափի գոտում բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը:
3. Ներկայացված սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներում գործունեության տարածքի և կադաստրային քարտեզների միջև առկա է անհամապատասխանություն:
   Համաձայն 2014 թվականի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի, 7-րդ կետի, լիազոր մարմնի սահմանած ժամկետում պահանջված նախատեսված փաստաթղթերը և տեղեկատվությունը չներկայացնելը, թերություններով կամ ոչ լիարժեք ներկայացնելը հիմք են փորձաքննական բացասական եզրակացություն տալու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները «Դ Վենչուրս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղի ափամերձ տարածքի 12-րդ փողոց հ.57, հ.58 և հ.59 հողամասերում ցանկապատի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան